



15. ՃԱԿԱՏԱԳԻՐ

Լինում է մի հարուստ մարդ: Այդ մարդը ճակատագրի մասին չատ հեքիաթներ էր լսել ու չատ էր փափաքում տեսնել այն մարդկանց, որոնք մարդուս ճակատի վրան գրում են: Նա մեկ անգամ հյուր ընկավ մի գյուղում և ճակատագրի մասին մտածելու ժամանակ տեսավ, որ մի տնից երկու աներևույթ մարդ դուրս եկան:

Սա գնաց նրանց մոտ և ասաց. — Ո՛վ մարդիք, դո՞ւք եք ճակատի վրա գիր գրողները:

Նրանք էլ պատասխանեցին և ասացին. — Այո՛, մենք ենք:

Մարդը նրանց ասաց. — Ինչո՞ւ եք եկած այս տունը:

Նրանք ասացին. — Այստեղ նորածին մանուկ կա, եկել ենք նրա ճակատը գրել և նրա ճակատին գրեցինք, որ նա մեծանա ու այն հարուստի կալվածներին տիրանա, որը այժմ այս գյուղում հյուր է:

Մեր մարդը, սաստիկ չփոթված, ներս է մտնում նրանց տունը և առաջարկում է նորածին մանուկի ծնողներին, որ ինքը կամենում է նրանց նորածին որդուն գնի՝ նրա ծանրությունք փող տալով: Մանուկի ծնողները աղքատ էին և երբոր փողի անունը լսեցին, իսկույն համաձայնվեցին ու նրա ծանրությունք փող առնելով՝ իրանց ամենդ որդուն տվին հարուստին: Հարուստը վերցնում է երախային և դուրս է գալիս փողոցը:

Նա կանչում է մի մշակի և ասում է. — Եթե տանես այս երախային գյուղից դուրս սպանանես և նրա շորերը արյունաթաթախ ինձ բերես, քեզ 10 բրլի կրտամ:

Մշակը համաձայնում է: Նա երախային տանում է դաշտը, մի փոքրիկ բնակարան է շինում նրա համար և նրան դնում է անոր մեջ: Այնտեղ լինում է մի արածող հոտ: Նա բռնում է մի այծ, ծիծը երգից կախ առնում և երախան սկսում է ծծել, այծն էլ կարծում է, թե յուր ուն է այնտեղ և միշտ գալիս է այնտեղ ու ծիծը կախ անում երգից: Այն մշակը բռնում է մի ուրիշ այծ, ականջը կտրում է և երախայի չապիկը արյունոտելով՝ տանում է հարստի մոտ, նա էլ հավատում է նրան և մի քիչ հանգստանում է:

Անցնում է մի քանի օր, և այժի տեր պառավը սկսում է որոնել յուր միակ հատիկ այծին ու գտնում է նրան մի փոքրիկ տնակի մոտ: Նա ներս է նայում երդկից և զարմանում է, որ տեսնում է մեջը նստած մի երախա: Իսկույն վերցնում է նրան ու տանում է իրանց տունը և նրան անվանում է Թապտըղ, որ կնշանակե «գտնված»:

Այդ երախան շատ սիրուն է լինում և առույգ, մոտ 10 տարեկան: Այն հարուստն, որ ուզում էր նրան սպանել տալ, մի անգամ այդ գյուղը հյուր է գալիս պառավի մոտ: Պառավը սկսում է կանչել Թապտըղ: Այս անունը լսելով՝ հարուստը վեր թռնում և հասկընում է, որ այս այն երախան է, որին մշակը չէր սպանել: Նա մի նամակ գրում է յուրյանց տունը և պատվիրում է, թե. «Երբ նամակաբերս հասնի, ձգեցեք թոնիրը և այրեք», և նամակի ծրարը փակելով՝ տալիս է գեղեցկագեմ, նորափթիթ պատանուն, որ յուրյանց գյուղը տանե: Պատանին տանում է և հասնելով հարստի տան առջևի պարտեզին՝ պառկում է մի քիչ հանգստանալու և քունը տանում է: Այդ ժամանակ հարստի փոքրիկ աղջիկը դուրս է գալիս այգին զբոսնելու և տեսնում է քնած տղային, գրպանի մեջ էլ երևում էր թղթի կտորը, նա հետաքրքրությունից հանում է թուղթը և կարդում է, բայց շատ է խղճում այդ տղայի վրա և նամակի միտքը իսկույն փոխում է ու նորից գրպանն է դնում: Պատանին զարթնում է և նամակը հանձնում է տանտիկնոջ: Նա նամակը կարդում է թե չէ, հարսնիքի պատրաստությունն է տեսնում, որովհետև նամակում գրված էր, թե. «Երբ նամակաբերս կըհասնի, հարսանի՛ք արեք մինչև իմ գալը»: Այդպես էլ լինում է: Այդ միջոցներին հարուստը վերադառնում է և տեսնում է, որ փոխանակ սպաննելու, նրան ամուսնացրել են իր աղջկա հետ: Այս բանի վրա շատ է զայրանում և ամառը հնձողներ վարձելով՝ նրանց պատվիրում է, թե. «Ով որ ձեզ համար առաջին անգամ հաց բերե, նրան սպանե՛ք, եթե որ նա ասե, թե աղեն եմ, դարձյալ կըսպանե՛ք», և ճաշվա հացը պատրաստելով՝ առավոտը շուտով տալիս է յուր նոր փեսային և ուղարկում է արտը:

Նա եկեղեցու մոտով անցնելու ժամանակ հացը դնում է ցած ու մտնում եկեղեցին երգելու: Կեսօրվա մոտերը հարուստը ուզում է գնա, տեսնի՝ արդյոք սպաննել են փեսային, թե ոչ, բայց եկեղեցու մոտով անցնելիս տեսնում է հացը այնտեղ դրած, իսկ փեսան չըկա: Նա կարծում է, թե փախել է, և հացը վեր է առնում, ու ինքն է տանում: Հնձվորներն հենց նրան էին սպասում, հասավ. թե չէ, իսկույն Թափվեցան վրան ու գլխատեցին: Այս միջոցին նա շատ էր բղավում, թե՛ աղեն եմ, բայց լսող չըկար: Այսպիսով՝ այն տղան արժանացավ այն հարստի բոլոր կալվածներին: